ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0091 Երևան, Քանաքեռ 14 փող., 2. 1, Հեռ.՝ (374 10) 283-670, Ֆաքս՝ (374 10) 297-355 Էլ.փոստ: state-protect@ppgv.am

№ 27-2-425 «26» 02 2018 թ.

**«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» Խորհրդատվական ՀԿ ծրագրերի համակարգող պարոն Դանիել Իոաննիսյանին**

***Հարգելի պարոն Իոաննիսյան***

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին հասցեագրված Ձեր 19.02.2018թ. N Հ-1484 դիմումը ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունում ստացվել և քննարկվել է:

ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ծառայողները պայմանագրային հիմունքներով իրականացնում են Երևանի քաղաքապետարանի (հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փող., 1) վարչական շենքի անցագրային և ներօբյեկտային ռեժիմի պահպանություն (հասարակական կարգի պահպանություն, որոշ շրջանակի անձանց շենքի տարածք մուտք գործելու սահմանափակում և այլն): Այդ գործողությունները իրականացվում են պատվիրատուի (պահպանվող օբյեկտի պատասխանատու անձանց) կողմից մշակված և պահպանություն իրականացնող ստորաբաժանման հետ համաձայնեցված անցագրային և ներօբյեկտային ռեժիմի կազմակերպման կարգի մասին հրահանգի համաձայն: Հրահանգը նախատեսում է պահպանվող օբյեկտ անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), նյութական արժեքների ներս բերման (դուրս հանելու) կանոնները:

ԱԱԵՎ

Նշված՝ 19.02.2018թ. դեպքով, Երևանի քաղաքապետարանի պահպանությունը իրականացնող ոստիկանության ծառայողները իրենց գործողությունները իրականացրել են վերոհիշյալ հրահանգի համաձայն, նկարահանումներ կատարելու թույլատվության իրավասություններ ունեցող Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության պետի պահանջով:

***Պետ,***
***ոստիկանության գեներալ-մայոր*** ***Ա.ԶԱՔԱՐՅԱՆ***

Կատ. Ս. Բաբայան
Հեռ. /010/29 73 42